

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԷՂԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ԴՅ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 ԹԹ.), ԵՐԵՎԱՆ, ԵՂՅ ԶՐԱՏԱՐԱԿՎՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 ԷՁ + 16 ԷՁ ՆԵՐԴԻՐ:**

Ընթերցողի դատին է հանձնվում պ.գ.դ., պրոֆեսոր Էղիկ Մինասյանի նոր՝ քաղաքամայր Երևանի արդի փուլի պատմությանը նվիրված մենագրությունը: Հեղինակին հաջողվել է արխիվային փաստաթղթերի, Երևանի քաղաքապետարանի ընթացիկ արխիվային նյութերի, մամուլի, տպագիր սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնել ժամանակակից Երևանի համընդգրկուն պատմությունը՝ հասցնելով մինչև մեր ապրած օրերը: Մենագրությունը գալիս է լրացնելու Երևանի մասին նախորդ տարիներին հրատարակված նյութերը, այդ թվում՝ 2018 թ. լույս տեսած՝ Երևանի պատմության հանրամատչելի տարբերակը: Սույն մենագրությունը, որը հեղինակի՝ բազում տարիների ընթացքում հավաքած նյութերի վերլուծության արդյունքն է, տեղեկությունների անփոխարինելի աղբյուր կլինի մայրաքաղաք Երևանի մասին հետագա ուսումնասիրությունների համար:

Աշխատությունում համապատասխան փաստաթղթերի վերլուծությամբ ցույց է տրվում հասարակական-քաղաքական կյանքը մայրաքաղաքում 1991-2018 թթ., հայոց անկախ պետականության խորհրդանիշների հաղթարշավը մայրաքաղաք Երևանից նորանկախ հանրապետության ողջ տարածքում: 1991 թ., երբ հայ ժողովուրդը վերականգնեց դարերով երազած իր պետականությունը, Երևանը ստանձնեց այս անգամ արդեն անկախ Հայաստանի՝ բոլոր առումներով կենտրոնի դերը:

Նորանկախ հանրապետության մայաքաղաքը փորձությունների ենթարկվեց ՀՀ անկախության առաջին տարիներից սկսած: Մեր երկրի՝ մինչ այժմ շարունակվող շրջափակումը հարևան Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, վերջինիս սանձազերծած ադրբեջանա-արցախյան պատերազմը, ադրբեջանահայության բռնագաղթը, սոցիալ-տնտեսական դժվարին իրավիճակը ծանր դրության մեջ դրեցին մայրաքաղաքի բնակչությանը: Բնակչության գնողունակության անկումը, պարենամթերային ապրանքների առաջարկի պակասորդը, հասարակական ծառայությունների ծավալների կտրուկ կրճատումը առավել, քան որևէ տեղ, զգացվում էր Երևանում: Դիմագրավելով այդ ծանր փորձություններին՝ մայրաքաղաքը կարողացավ բազմակողմանի օգնություն ցուցաբերել մարտնչող Արցախին՝ իր լիարժեք ու ակտիվ մասնակցությունը բերելով անկախ պետականության կայացման գործին: Այդ իրողության վերլուծությանն է նվիրված առաջին գլխի ենթագլուխներից մեկը:

ՀՀ անկախության ավելի քան քառորդ դար տևած շրջանում մայրաքաղաքի՝ միջազգային տարբեր կազմակերպությունների և քույր քաղաքների հետ արտաքին կապերի ամրապնդումը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012 թ. Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելը նպաստեցին Երևանի միջազգային հեղինակության բարձրացմանը:

Աշխատության՝ մայրաքաղաքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի վերլուծությանը նվիրված գլուխներում և ենթագլուխներում ցույց է տրվում, որ այդ ոլորտներում իրականացրած բարեփոխումները, իրենց թերություններով հանդերձ, նպաստեցին Երևանի հետագա զարգացմանը: Աշխատությունում առանձին գլուխ է նվիրված մայրաքաղաքի վարչական բարեփոխումներին, ներկայացված է Երևանը հանրապետության վարչաքաղաքական համակարգում, նրա կառուցվածքային փոփոխություններն ու սոցիալ-տնտեսական կյանքը: Համապատասխան փաստաթղթերի վերլուծությամբ ցույց է տրվում, թե ինչպես արդեն 21-րդ դարում զարգացման կայուն և դինամիկ փուլ թևակոխած Հայաստանում վերոնշյալ բարեփոխումներով նոր շունչ հաղորդվեց նաև նրա քաղաքական, տնտեսական, արդյունաբերական, մշակութային ու կրթական կենտրոն Երևան քաղաքին:

Մենագրության վերջաբանում կատարված են անհրաժեշտ եզրակացություններ ու առաջարկներ, որոնք, անշուշտ, կօգնեն մայրաքաղաքի հիմնախնդիրների լուծմանը: Լայնածավալ աշխատանքները հատկապես շինարարության, բարեկարգման, առևտրի ու սպասարկման, մշակույթի, կրթության և սպորտի ոլորտներում տարեցտարի որակական փոփոխություններ են մտցնում Երևան քաղաքը իր բնակիչների և հյուրերի համար առավել բարեկեցիկ ու գրավիչ դարձնելու գործում:

Կարելի է փաստել, որ Երևանն աշխարհի հնագույն և միևնույն ժամանակ երիտասարդ քաղաքներից է, 21-րդ դարի երկրորդ տասնամյակ թևակոխած ժամանակակից քաղաք, որն ապրում է զարգացած մեծ քաղաքներին հատուկ ռիթմով:

Հայոց հին ու նոր մայրաքաղաք Երևանի ժամանակակից պատմությանը նվիրված սույն մենագրությունը հեղինակի սիրո ու նվիրումի արտահայտություն է Երևանին և այն գնահատելու ու զարգացնելու պատգամը ապագա սերունդներին:

Էդիկ Մինասյանի «Մայրաքաղաք Երևանը ՀՀ անկախության տարիներին (1991-2018 թթ.)» մենագրությունը կարևոր ներդրում է հայագիտության ոլորտում և ցանկալի է, որ այն հնարավորինս հասանելի դառնա ընթերցող լայն շրջաններին, առավել ևս ներկա փուլում, երբ մեր ռիսերիմ հարևանների կողմից փորձ է կատարվում զավթումներ կատարելու նաև միջնադարյան պատմության տարածություններում՝ Երևանը հռչակելով ոչ հայկական: Ներկայացվող մենագրությունը հուժկու հարված է հակառակորդի այդ հակագիտական ու հակապատմական նկրտումներին:

Արման Եղիազարյան – պ.գ.դ., պրոֆեսոր